ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 26 Նոյեմբերի | 1885 | Երեքշաբթի 26 Նոյեմբերի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 200

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. Հատով 5 կոպեկ
Բաժանորդ են գրվում Թիֆլիսում ամեն տեղ և խմբագրատանը

Խմբագրությունը հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»։

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Հայտարարությունները ընդունվում են ամեն ժամ։ Հայտարարությունների գնաչն 2 կ., երկրամասերի համար՝ կրկնապատիկ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱ ԹԵՐԹ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1886 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՆՈՒՅՆ ԴԻՐՔՈՎ և ԾՐԱԳՐՈՎ

(ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ)

Ծրագիր

I. Տէրութեան կարգադրութիւններ։ II. Առաջնորդող յօդուածներ-առօրեայ ամեն տեսակ խնդիրների մասին։ III. Քրոնիկոն — լուրեր, առօրեայ անցքերի համառօտ տեսութիւններ, պատահական յօդուածներ զանազան նիւթերի վերաբերութեամբ։ IV. Թղթակցութիւններ—Կովկասից, Ռուսիայից և միւս երկիրներից։ V. Քաղաքական—Քաղաքական կեանքի և երևոյթների վերաբերեալ տեսութիւններ, յօդուածներ և լուրեր։ VI. Խառն լուրեր։ VII. Հեռագրներ։ VIII. Առևտրական տեղեկութիւններ։ XI. Խմբագրական պատասխաններ։ X. Բանասիրական։ Ֆելլէտոններ, պատկերներ, զրոյցներ, վէպեր, վիպասանութիւններ, գիտութեան, գեղարուեստների, արհեստների և արդիւնագործութեան ամեն ճիւղերին վերաբերեալ աշխատութիւններ և քննադատական յօդուածներ։ XI. Յայտարարութիւններ—Հայոց և օտար լեզուներով։

ՏԱՐԵԿԱՆ գինն է 10 րուբլի, վեց ամսուան՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Խմբագիրը—Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucas) Rédaction „Nor-Dar“։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։ Տեղեկագիր Ս. Երուսաղէմի պատր. ընտրութեան։ Թղթակցութիւններ—Երևան։ Քաղաքական.—Անգլիա։ Լուրեր։ Խառն լուրեր։ Հեռագրներ։ Յայտարարութիւններ։ Բանասիրական. — Նաւասարդի տօներից մինը։

ՔՐՈՆԻԿՈՆ

Նոյեմբերի 24-ին, Զուղուրքէում ձիաքարշ-երկաթուղու տակն ընկաւ մի ռուս, որը խմկոյն և եղի հոգին աւանդեց։ Մեռածի երեսը բոլորովին ջախջախուել էր և այլանդակուել։ Այս քանի երրորդ անգամն է, որ ձիաքարշ երկաթուղու ծառայողների անպգուշութիւնից զոհեր են լինում, սակայն ուշադրութիւն գաձնող չը կայ։ Սա ցաւալի երևոյթ է։

—

ԱՍ-ՊՈՒՆԶԱՐ գիւղից (Դարսի նահանգում).—Այս գիւղը բաղկանում է 72 տուն Թիւրքմէններից, որ կառավարվում են իրենց ցեղապետով։ Այս օրերս դրանց ցեղապետ Իսմայիլ Աղայ Ադամ-Զադէն վերադարձաւ իւր ուղեւորութիւնից, որ գնացել էր Մէկկա քաղաքում Մահմէդի գերեզմանը համբուրելու։ Հետաքրքիր էր տեսնել թէ ինչպէս Թիւրքմէնները դիմաւորեցին նրան։ Մօտ 500 ձիաւոր գնացել էին մինչև Դարա-Ուրդան (Թիւրք և ռուսական սահմանը), ուր նրանք համբուրում էին ցեղապետի ոտները, հասակաւոր մարդիկ—ձեռքը, երիտասարդները օրքը, իսկ կանայք հանդերձի քղանցքները։ Ցեղապետը օրհնեց բոլոր Թիւրքմէններին։ Այս Թիւրքմէնները իրենց համարում են իբր հայեր ծագելով Թորդոմայ ցեղից։ Նրանց մէջ պեռ պահուած է քրիստոնէութեան մի քանի ծէսեր և սովորութիւններ։

—

Կովկասի կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակովը, նոյեմբերի 21-ին, հինգշաբթի առաւօտեան տասն ժամին, Թիֆլիսից ուղևորուեցաւ դէպի Պետերբուրգ Վլադիմիրկայի ճանապարհով։

—

Նոյեմբերի 20-ին եկաւ Թիֆլիս Թբիլիսի քաղաքական կառավարութեան կողմից նշանակած Թէհրանի նոր պետական խալիլ-բէյ-Նֆֆէնդին, որը նախ քան այս պաշտօնի մէջ նշանակուելը, Թիւրքիայի կողմից ներկայացուցիչ էր Սերբիայում։

—

Լրագիրների ասելմամբ, Դուդէվի գաւառի Մուխրան գիւղում, այնտեղի եղջերաւոր անասունների մէջ ժանտախտ է երևացել և վնասներ է պատճառում։

—

ԲԱԳՈՒԻՑ։—«Մարդասիրական Ընկերութեան» պատուաւոր անդամ պ. Սամուէլ Բաղերեանցի առաջարկութեամբ, պ. Ալէք. Մանթաշեանը սիրով վճարից „Մարզ. Ընկ.“ օգտին հարիւր ր-էլի և անցաւ նոյն „Ընկերութեան“ պատուաւոր անդամների դասը։ Շնորհակալութիւն մարդասէր պարոնին։ Կեցցէ պ. Ա. Մանթաշեանը և կեցցէ պ. Ս. Բաղիրեանը, որը «Մարզ. Ընկեր.» օգտին միշտ աշխատելով կարողացել է նրան տալ վեց պատուաւոր անդամներ։

—

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ.—Նոյեմ. 20-ին յայտնի դերասան պ. Ադամեանը 3-րդ անգամն էր որ դուրս եկաւ բեմ։ Խաղացին „Ոճրագործի քնաւանիք“-ը։ Ցաւգեալի դերասանը թէ հրքան է գրաւել մեր հասարակութեան սիրտը՝ նոյն իսկ մեր ալեզարդ „ապերնեբըն“, որոնք Ճրագվառօդից չեռոյ չատ տարիներ է, որ տնից չեն դուրս գալիս, այժմ շարունակ նստած են Թատրոնի դահլիճում և առանձին ուշադրութեամբ հետևում են ներկայացման...շարժուձևն, շատ անգամ արցունք աչքերին վերադառնում են տուն։

—

Նոյեմբերի 23-ին Մետեխի բանտից վախան չորս բանտարկեալներ, որոնք դատապարտուած էին տաժանակիր աշխատանքի. դրանցից մէկը վախտերս ժամանակ սպանուեցաւ պահապան պինուորից։

—

„Русь“ լրագիրը տեղեկացել է, որ նախկին սերբ-Թրքական պատերազմի սերբական զօրավարի հրամանատար գեներալ Մ. Գ. Զեբեխաեվը Սիլան Թագաւորից ստացած Տակովա առաջին աստիճանի չքանշանը յետ է ուղարկել Թագաւորին։

—

ՇԱՄԱԽՈՒՑ։—Այստեղ դիֆտերիտը սարսափելի կերպով տարածուած է, նամանաւանդ Թուրքերի Թաղերում շատ զոհեր է անում։ Փայտ ու ածուխը առասպելական գին են ստացել։

—

ԲԱԳՈՒԻՑ։ — Նկարիչ պ. Բաշինջաղեանը իւր նկարահանդէսը բացել է „Մարզ. ընկ.“ դահլիճում։ Դահլիճը ձրի է տուած։ Պատկերահանդէս յաճախողների Թիւը, որպէս յոյսում են, բաւականին չատ է. ցանկանք յաջողութիւն։

—

ՀԱՄԶԱՅԻՄԱՆԻՑ պ. Մ. Կոճինեանը ուղարկել է մեզ մի նամակ և Թախանձանօք խնդրում է հրատարակել. այդ նամակից մենք քաղում ենք հետևեալը։—„Նոր-Դար“-ի համարներից մէկում հրատարակուած էր մի լուր, որի մէջ ասուած էր Թէ անյայտ աւազակները Մ. Կ-նի խանութից տարել են 1050 րուբլու ապրանք։ Ինչպէս երևում է մի քանի անխղճմտարդիկ չեն հաւատացել այդ բանին առարկելով Թէ խանութատէրը արարմունքն է և այդպիսով նա կամենում է ազատուել իւր պարտքերից։ Որպէս զի պ. Մ. Կ-ն ազատուի այդ չարախօսութիւնից պ. Փերումովը առաջարկել է տանտէրի հետ մարդիկ մտն գալ ամենի տները և խանութները, բոլորն էլ ընդունել են, բայց երբ մտնգալով հասել են գիներվաճառ Տ-ն-յի տան, նրա տէրը Թոյլ չէ տուել և պահապան հայհոյանքներ Թափելով հեռացրել է նրանց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԻԱՍԱՐԴԻ ՏՕՆԵ ԻՑ ՄԻՆԸ։

—

Հին ժամանակ ուրիշ յայտնի ազգերի նման մենք հայերս էլ ունեցել ենք տօներ—Հանդէսներ. անշուշտ գրանք երկու տեսակ գոյն կունենային—կրօնական և քաղաքական, որովհետև հնումն երկու վարչութիւնները—հոգեւոր և մարմնաւոր սկիզբ առանձին սահմանուած կարգ ու կանոններ՝ աշխարհավարմամբ հանդէսներ ունենային։ Անթիւ տօներից, անհամար յիշատակներից յայտնի են միայն Նաւասարդի տօնը, որ կատարվում էին Հայաստանի պահպան աստուածները համար, քանի նախնեաց յիշատակները կենդանացնելու համար։ Այդ հանդիսաւոր օրերին՝ բարձրաւանդակները, լեռնահովիտները սքանչելի կերպով գեղեցկանում էին, ներկայ էին լինում նախարարները, իշխանները իրենց Թագաւորի հետ.—կարճ տզամարդիկ մրցում էին, հասարակաց խաղեր սարքվում և վայելչութիւնները անում։ Այդ սուրբ տօները 3000 տարու չափ կատարել են մեր երջանկայիշատակ նախնիքը. խնդացել, ծնդացրել են օդը Բագրեւանդայ տափերու և բլուրներու վերայ, մինչև իրենք էլ նրանց փոշիների տակ ծածկուել են։ Ցաւ է իրաքանչիւր հայի համար, որ ոչ միայն չունինք այդ տօների նկարագրութիւնները, այլ և սոսկ անունները. եթէ մի երկուսի մասին լսել ենք, քիչ հասկացողութիւն ունինք, այդ էլ չնորհիւ բանաւոր զրոյցների, որ ժողովրդի մէջ մնացել են,—Թէև քրմերի տեղ քահանաները բռնեցին, բագիններն ու մեհեանները կործանուեցան և նրանց քար ու աւազից ժամ ու տաճարներ չինուեցան, հայն էլ քրիստոնեայ դարձաւ, բայց հեթանոս պապերի ազիզ տօները, սովորութիւնները ու աւանդութիւնները չը մոռացաւ, նա իւր ծոցում պահից մինչև գրին յանձնեց։

Ս. Լուսաւորիչը քրիստոնէութիւնը հայի սրտում հաստատելու համար յայտնի է Թէ՝ որքան մեհենական մատեաններ այրել տուեց. վախենում էր որ դեռ աւետարանի վարդապետութիւնը խոր արմատներ չունենալով հայոց մէջ, չուտով կարող է խափանուել, և իրրև մատղաշ ծիլ՝ հեթանոսական կլակից խանձուել,—սկզբից բարւոք համարեց ժողովրդի սեպհական տօների անունները փոխել. լաւ գիտէր որ ժողովուրդը յանկարծ չէ կարող իւր դարաւոր տօներից ձեռք քաշել. իւր յաջորդներին էլ պատուիրեց Լուսաւորիչը որ հետզհետէ եկեղեցական տօների փոխեն հեթանոսական տօները։ Այդպէս էլ արին, Բայց պատուաստումը յաջողութեան հետ իւր վնասն էլ ունեցաւ, որովհետև մեծ մասամբ օտարացրեց ժողովրդին, սատեց, արհամարհանք ներշնչեց նրա մէջ դէպի այն ամենը, ինչ որ հին էր, ինչ որ հեթանոսական պապերից մնացած էր, ինչ որ կառավարական դարերի հոտ էր բուրում. այդ զգուանքն ու արհամարհանքը շատ բան կորցրեց, շատ բան լալեց մեզանից. յաճախ քրիստոնեայ հայը պատրաստ էր ուրանալ իւր նախահայրերը, որովհետև գժբաղտաբար նրանք հեթանոս էին։ Նախկին վարդապետները այդ սխալ ուղղութեամբ անխտիր հալածանք բառնալով քրիստոնէութեան անունով հեթանոսական կարգերի դէմ, ջնջեցին, խորտակելով մոխիր դարձրին այն ամենը, որից պիտի հայ ազգը առնէր իւր բարոյական և մտաւոր վերակենդանութիւնը։

Այժմ նայենք, սիրելի ընթերցող, Թէ հնաւանդ հանդէսների քանի բերը է մնացել, և ինչ Թշուառ վիճակում։

Նաւասարդի տօները էին կոչվում այդ հանդէսները։ Նաւասարդ հին հնդիկ և զանդիկ լեզուով նշանակում է նոր տարի։ Աւելեայ ամսի օրերը նուիրած էին վարդավառ, վարդամարդ Աստղիկ դիցուհուին. քրիստոնէութիւնը մկրտեց այդ տօնը և անունը դրեց Վարդավառ։ Այս սրբազան օրը աղջիկները հաղորդվում էին, որովհետև հօր չարաչար չարաւնակ պատ էին պահել. խնամախօսութիւնները են լինում, վեհացուն մերգ, զանազան տեսակ նորահաս պտուղները, չաքար, գաւիթով գինի է ուղարկում հարսնացուի տունը, ամեն տեղ ծիծաղ, ամեն տեղ խնդութիւն է, որովհետև Վրէժիծը (Վարդավառը) եկել է. երիտասարդին նշանած աղջիկ ու տղայ, մէը ու մանուկ դուրս են գալիս տափերը լցվում, կանաչ կարմրին տալիս, ծաղիկները, սիրուն խոտերը պակասն էլ գրանք են Թամամեցնում։

Նաւասարդի առաջին օրն (11 օգոստոսի) որ հայոց քաղաքական տարեգլուխն էր—Ամանորյ էր կոչվում մի քանի օր տևում էր. և յիշատակ ջրհեղեղ—օրից մարդիկ տապանով փրկուեցան—ջրախաղեր էին սարքում։ Այժմ համարեա Թէ վերացել է այդ սովորութիւնը ժողովրդի մէջից։ Ուրիշ տօն ամանորյ ամենաչէք պէս, կատարում էին մեծ հանդէսով բերքերին և դաշտերին լուսնին և առատութիւն լինելու համար։

Որովհետև նախնի սահմանած տօները չարժական տօների փոխուելով, փոփոխել են և իրենց ժամանակները, ուստի ամանորյ ամենաչէք պէս տօնը ներկայ ժամանակումս կատարում են ս. Աստուածածնի վերափոխման տօնին—ժողովուրդը պատուիրների երախայրիքը եկեղեցի է ուղարկում մի ամիսէլ մէջ—ցորեն, խաղող, դեղձ, խնձոր, տանձ, Թուզ և այլն, և մատաղները մորթում իւր արտերի այգիների պտուղ ու բերք հասցնողին։

Ժողովուրդը վախենալով մինից, կարկտից, տարափից, Ջատից սկսած ամեն երկուշաբթի չ-րշի է պահում, չէ աշխատում, մինչև գալիս է հչի պոչը, որ է ըստ մատենի Հոփնվալոպոչ։ Իսկ ս. Աստուածածնի պատին գաւառներում անուանում են խոշոր օրհնոփ կամ պուռ օրհնոփ պաս, նայելով ինչ տեղ ինչ պտուղներ են բանում։

Նաւասարդի 15-ին մեծ աշխարհահռչակ տօն նշանակած էր և պատիւ Աւոհիք դիցուհուին, որ Հայաստանի ամենից սիրելի և մեծ խնամակալ պահապանն էր, որի մէջ Հայերը ամեն աստուածահաճոյ յատկութիւններ էին նկատում։ Այս տօնը մկրտեցին—Աւետման անունը տուին, որ ժամանակներից յետոյ փոխոխուելով Վէրափոխումն ս. Աստուածածնի անունը ստացաւ։

Նաւասարդի նման մեծ և ամենապանծ տօնն իւր սկիզբն առնում է ըստ աստղաբաշխական յուցմանց և մեր տօմարական տարեհաշիւների այն օրից, երբ նահապետ Հայկը յաղթելով սպանեց Բէլին. և այդ օրը օգոստոսի 11-ն էր Քրիստոսի ծննդից 2492 տարի առաջ։ Այս հին և սքանչելի յիշատակը հ. Աւետնեը իրաւամբ անուանում է Օր հայկեան և Տօն ազգային։

Քանի որ ազգային ինքնագլխութիւն կար, Նաւասարդի տօնը և նրա հետ

ՏԳՆԿՑԿՈՒԹԻՒՆ

Ս. Յակոբեան Ս. Յակոբեան Վահագն Ս. Ալեքսանդրեան Ս. Ալեքսանդրեան

ԱՍՈՂ

Ս. Ալեքսանդրեան Ս. Ալեքսանդրեան Ս. Ալեքսանդրեան Ս. Ալեքսանդրեան

ԱՆՏԱՌԱԼ, ՈՒՌ ՊԱՏԱՀԱԾ ՉԻ ՄՆԱՑ

Ս. Ալեքսանդրեան Ս. Ալեքսանդրեան Ս. Ալեքսանդրեան Ս. Ալեքսանդրեան

ՀՈԳԵՎՈՐԸ

Ամերիկյան գրող Ջեք Լոնդոնի «Մարտին Իդենը» վեպի հերոսը՝ ծովագնաց Մարտին Իդենը, ծովում ընկերոջ հետ նավաբեկության է ենթարկվում։ Ընկերը խեղդվում է, Մարտին Իդենը մենակ է մնում ծովի մեջ։ Նա ուզում է ինքնասպան լինել, բայց հանկարծ հոգևոր ուժ է զգում իր մեջ, որը ստիպում է նրան պայքարել մահվան դեմ։ Նա ապրում է, հաղթում է ծովին, ամրանում է ոգով ու մարմնով։

Ինչպե՞ս է հաղթում Մարտին Իդենը։ Ինչպե՞ս է նա ձեռք բերում այդ հոգևոր ուժը, որ նրան ստիպում է ապրել։ Ինչպե՞ս է նա ամրանում ոգով ու մարմնով։

Ահա այդ մասին է գրում Ջեք Լոնդոնը։

Մարտին Իդենը ծնվել է ծովի ափին, ծովի ալիքների մեջ է մեծացել, ծովի հետ է կռվել, ծովի հետ է հաղթել։ Նա ծովագնաց է դարձել, որովհետև ծովը նրա հոգևոր ուժն է։ Ծովը նրա հոգևոր ուժն է, որովհետև ծովը նրա կյանքն է։

Ծովը նրա կյանքն է, որովհետև ծովը նրա հոգևոր ուժն է։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՅՍ

ԳԱՂՈՒԹԱՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

21 Դեկտեմբեր

ՊՏՏԵՐՈՒՄ. Շաբաթ մեր թղթին «Կարծիք Ռուսի» ճառընտրած հատուածում կդնեինք մեր խոսքը։ Նախ մի խոսք ունեցել։ Ասել էինք, որ մեր ազգայնոց մեծ մասը ոչ միայն չի ճանաչում իր ազգային պահանջները, այլև ոչ ոք չի ուզում ճանաչ